



Doi: 10.56737/2953-7843-2025.08-119

ԱՆԼԻՏԱԿԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՊՄՀ

ORCID ID 0000-0001-9526-9464

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ

ORCID ID 0000-0001-9506-8611

ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ՓԱՅԼՈՒՆ ՕՐԻՆԱԿ ՎԱՅ-ՈՒՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԵՆՈՍՈՒԹՅԱՆ¹

Մոսկվայի Լազարյան ինստիտուտը որպես ռուս եւ հայ
ժողովուրդների մշակույթի, գրականության, լեզուների,
փոխադարձ նվիրվածության խորհրդանիշ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի երազանքը՝ Ռուսաստանի օգնությունը ազատագրվել
մահմեդական լծից, իրականացավ 1826–1828 թվականների ռուս-պարս-
կական պատերազմի ժամանակ, երբ Արեւելյան Հայաստանն ամբողջո-
վին ազատագրվեց պարսկական լծից ու մտավ Ռուսական կայսրության
կազմի մեջ: Պատմական այդ նշանավոր իրադարձությունը իր արտացո-
լումը գտավ հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի
«Վերք Հայաստանի» վեպում, որն ունի հայ-ռուս ժողովուրդների բարե-
կամությունը ձոնված «Ձանգի» հավելվածը: Դրանում, հիշելով հայերի
դարավոր պետականությունն ունենալու փաստը, վեպի այդ հատվածի մի
մասը Աբովյանը շարադրում է գրաբարով, որպես հին արքայական լե-
զու: Սա հոգեբանական հետաքրքիր պահ է: Նա դեպի հզոր Ռուսաստանն
ունեցած իր երախտագիտությունն արտահայտում է հին հայ արքաների՝

¹* Ստացուել է՝ 5.05.2025, գրախօսուել է՝ 6.06.2025:

էլ. հասցե՝ aelita.dolukhanyan@gmail.com, galstyanashot42@aspu.am:

Տիգրան Մեծի եւ սուրբ Տրդատ Մեծի լեզվով: Հայորդիներին Աբովյանը ոգեւորում է, թե Ռուսիայի հզոր բազուկը թող լինի նիզակ, միշտ պետք է երախտիք ունենալ այդ բազկի նկատմամբ: Մայր Վոլգան կլինի Հայաստանի Մայր Արաքսի մեծ քույրը, նրանք կհամբուրվեն Կասպից ծովի ալիքների մեջ: Եւ այդ քույրական բարեկամությունը կօրհնեն Սեւանա լիճն ու սուրբ Մասիսն իրենց հայրական ողջույնով²:

Երկու տարբեր ժողովուրդների փոխադարձ հոգեբանական կապվածությունը բացատրվում է այդ երկու տարբեր ազգերի քաղաքակիրթ լինելու եւ քրիստոնեական սկզբունքներն ու համամարդկային մարդասիրական արժեքները պահպանելու մեջ:

Հայ եւ ռուս ժողովուրդների հոգեւոր կապի ամենավառ դրսեւորումը եղավ 1815 թվականին Մոսկվայում բացված Լազարյանների դպրոցը, որը հետագայում դարձավ առաջնակարգ ինստիտուտ՝ իր ժամանակի կրթական առաջադեմ գաղափարների ու գիտելիքների հռչակավոր կենտրոն:

Մոսկվայի Լազարյան հաստատությունն այնքան հոգեբանական խոր հետք է թողել հայ եւ ռուս ժողովուրդների մշակութային կյանքում, որ նրա հիման վրա սկզբում ստեղծվել է Մոսկվայի Արեւելագիտության ինստիտուտը, իսկ հետո հռչակավոր ՄՀՄՊՀ (МГИМО)-ն: Ահա թե այդ առիթով ինչ է գրում հիշյալ բուհի ղեկավար, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Անատոլի Տորկունովը. «Հուլիս խորհրդանշական է, որ Լազարյան հաստատության 200-ամյակը դարձավ քննարկման գլխավոր նյութը՝ Հայաստանի մայրաքաղաք հյուրընկալ երեւանում 2015 թվականի հոկտեմբերի 22–24-ն անցկացված ՄՀՄՊՀ շրջանավարտների միջազգային երրորդ համաժողովի, որին մասնակցեցին մի քանի տասնյակ երկրներից ժամանած հյուրեր»³:

Լազարյան հաստատությունն սկզբում որպես դպրոց բացվել է Մոսկվայի սրտում՝ մի գեղեցիկ շենքում, որը պատկանում էր Լազարյան ընտանիքին:

² «Գրական ժառանգություն», 3, Գ. Ա. Վեյդեման, Նամակներ, ՀՍՍՐ ԳԱ հրատ., Երեւան, 1964, էջ

307:

³ Հմմտ. Глубоко символично, что 200-летие Лазаревского института стало главной темой III Международного форума выпускников МГИМО 22–24 октября 2015 г. в столице Армении-гостеприимном Ереване — с участием гостей из нескольких десятков стран, «Главы из истории Московского востоковедения», Лазаревский институт, Московский институт востоковедения, МГИМО, «Аспект пресс», Москва, 2015, էջ 10:

Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա Երկրորդը կամ Մեծը, հաշվի առնելով Լազարյան ընտանիքի նվիրյալ ծառայություններն իր երկրին՝ նրանց շնորհում է ազնվականության կոչում:

Լազարյան դպրոցում ուսումնառությունն սկսվել է 1815 թվականի մայիսի 14-ին: Առաջին տեսուչը եղել է Հարություն Ալամդարյանը, որին ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ռուսական զորքերին մեծ աջակցություն ցուցաբերած Թիֆլիսի թեմի առաջնորդ Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսը 1824 թվականին հրավիրում է իր նորաբաց Ներսիսյան դպրոցում աշխատելու: Տեղին է հիշել, թե ինչ եռանդով էր Ներսես Աշտարակեցին կազմում հայկական կամավորական զնդեր՝ ռուսական զորքին օգնելու համար: Դրա համար էլ Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը «Հայաստանի շուրջը» (“Autour de l’Arménie”) գրքում նրան կոչել է «Փիլոն հագած Գարիբալդի» (“les exploits de ce Garibaldi en soutane”)⁴:

1827 թվականին ուսումնարանը անվանակոչվում է ճեմարան: Լազարյան ճեմարանը գործել է բացառապես Լազարյան ընտանիքի նյութական անմնացորդ աջակցությամբ: Սա ունի նաեւ հոգեբանական այն իմաստը, որ ռուսական կառավարությունը գոհանում էր այդ իրողությունից: Աստիճանաբար բարձրագույն կրթարանի վերածված ուսումնական հաստատությունը ձեռք է բերում ոչ միայն համառուսական համբավ, այլև համաեւրոպական: Տասնամյակների ընթացքում Լազարյան հաստատություն են այցելել Ռուսաստանի կայսրերը, նշանավոր մշակույթի գործիչները, պետական այրերը:

Լազարյան հաստատությունն ուներ շատ հարուստ գրադարան, որտեղ բացի տպագիր գրքերից, կային նաեւ տարբեր լեզուներով հին ձեռագիր մատյաններ: Այդ հնագույն ձեռագիր մատյաններից էր 887 թվականին գրչագրված, ճոխ նկարազարդումներով շքեղ Ավետարանը, որ այսօր պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում ու մեր օրերը հասած հնագույն ձեռագրերից մեկն է⁵:

Դիտելի է, որ ռուս դասական գրողներից ճեմարան են այցելել օրինակ՝ Ա. Գրիբոյեդովը, Ն. Գնեդիչը, Ա. Պուշկինը, Վ. Ժուկովսկին, Ն. Գոգոլը եւ շատ ուրիշներ:

⁴ Ա. ԴՈՒՌԻԱՆՅԱՆ, Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, «Զանգակ» հրատ., Երեւան, 2011, էջ 21:

⁵ ՏԷՍ «Главы из истории Московского востоковедения», Лазаревский институт, Московский институт востоковедения, МГИМО, «Аспект пресс», Москва, 2015, էջ 87:

1829 թվականին Լազարյան ճեմարանի գլխավոր տնօրեն Ա. Բեկենդորֆի թույլտվությամբ ճեմարանում բացվում է տպարան: Հենց այդ տպարանում է հրատարակվել ճեմարանի շրջանավարտ Սերգեյ Գլինկայի «Հայոց պալմոթիկոնը» («История Армении») գիրքը 1832-ին⁶: Քանի որ Լազարյան կրթահամալիրը կոչվում էր արեւելյան լեզուների, այդ իսկ պատճառով Լազարյանների տպարանն ուներ արեւելյան հիմնական լեզուների, ինչպես նաեւ եւրոպական այլ եւ այլ լեզուների, անգամ սերբերենի տառեր: Այս հանգամանքը եւս մեծ հեղինակություն էր բերել հաստատությանը:

Լազարյան ճեմարանում իրենց նախնական կրթությունն են ստացել ռուսական գրականության եւ արվեստի այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Իվան Տուրգենևը, Միխայիլ Սալտիկով-Շչեդրինը, Կոստանդին Ստանիսլավսկին, Ռուբեն Սիմոնովը եւ ուրիշներ: Եւ բոլորովին պատահական չէ, որ ռուս գրողներից առաջինը Նոբելյան մրցանակ ստացած (1933 թ.) Իվան Բոնինը իր գրող դառնալու իրողության հանգամանքում հատուկ շեշտել է ազնվական ծագում ունեցող մասնավոր ուսուցչի ներդրումը, որն ավարտել էր Լազարյան հաստատությունը, քաջ տիրապետում էր երեք լեզուների, շրջագայել էր շատ երկրներում ու իր աշակերտի մեջ ներարկել էր վառ երեւակայություն. «Իմ դաստիարակը մի հույժ տարօրինակ մարդ էր՝ ազնվականության առաջնորդի որդի, որ կրթություն էր ստացել արեւելյան լեզուների Լազարյան հաստատությունում: Մի ժամանակ նա ուսուցչություն էր արել Օստաշկովում, Տամբովում եւ Կիրսանովում, սակայն հետո շատ խմելուց խզել էր բոլոր ազգակցական ու հասարակական կապերը եւ դարձել գյուղերով ու ագարակներով թափառող մի աստանդական:

Նա անսպասելիորեն կապվեց մեզ բոլորիս ու ինձ՝ հատկապես: Եւ իր այդ կապվածությամբ ու անվերջ պատմություններով (աշխարհով մեկ շրջելիս նա շատ բան էր տեսել ու բավական կարդացած էր, գիտեր երեք լեզու) իմ մեջ եւս ջերմ սեր արթնացրեց իր հանդեպ»⁷:

⁶ Պ. ՀԱՎՈՐՅԱՆ, Ա. ՀԱՎՈՐՅԱՆ, *Խաչատուր Աբովյանի կյանքի եւ գործունեության տարեգրություն, հտ. Ա., 1829–1833, «ՎՄՎ-Պրինտ» տպ., Երեւան, 2024, էջ 8:*

⁷ Հմմտ. «А воспитателем моим был престранный человек — сын предводителя дворянства, учившийся в Лазаревском институте восточных языков, одно время бывший преподавателем в Остапкове, Тамбове и Кирсанове, но затем спившийся, порвавший все связи родственные и общественные и превратившийся в скитальца по деревням и усадьбам. Он неожиданно привязался ко всем нам, а ко

Լազարյան հաստատությունն ավարտել են հայ անվանի շատ գրողներ ու մտավորականներ: Այնտեղ դասավանդել են նշանավոր հայ արեւելագետներ, լեզվաբաններ, բանասերներ, որոնցից մեկն էր Ստեփանոս Նազարյանցը: Նա Թիֆլիսում ավարտել էր Ներսիսյան դպրոցը, կրթությունը շարունակել Դորպատի համալսարանում՝ ստանալով փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան: Սանկտ Պետերբուրգում նշանավոր հայագետ Մարի Բրոսսեի միջնորդությամբ Նազարյանցն ընդունվում է Պրոֆեսորական ինստիտուտի արեւելյան բաժինը: Այն ավարտելուց հետո նշանակվում է Կազանի համալսարանի հայոց լեզվի դասախոս: 1849 թվականին պաշտպանում է դոկտորական ատենախոսություն, որը նվիրված էր պարսիկ մեծ բանաստեղծ Ֆիրդուսու «Շահ Նամե» վեպին: Նազարյանցը մի շարք գործեր ունի նվիրված պարսիկ բանաստեղծներին: Նա տիրապետում էր մի շարք արեւելյան լեզուների, դրանց թվում նաեւ թուրքերենին: Նա Լազարյան ինստիտուտ տեղափոխվելուց հետո այնտեղ դասավանդել է պարսկերեն, արաբերեն, լատիներեն: Դասընթաց է պատրաստել արեւելյան գրականությունների վերաբերյալ:

Ստեփանոս Նազարյանցը 1858-ին Միքայել Նալբանդյանի աջակցությամբ հրատարակում է «Հյուսիսափայլ»⁸ ամսագիրը, որը մեծ դեր է կատարել հայ նոր գրականության զարգացման գործում: Այնտեղ իրենց գործերն են տպագրել հայ դասական գրողներ Ռաֆայել Պատկանյանը, Սմբատ Շահագիրը եւ ուրիշներ:

«Հյուսիսափայլ» ամսագիրը հրատարակելու թույլտվություն ստանալու համար Նազարյանցը գրում է. «Ռուսաստանի հանդեպ իրենց զգացմունքի սրբությունը լիովին գիտակցելով՝ ինչպե՞ս եւ ինչ եղանակով կարող են գեթ մասամբ հատուցել երախտագիտության պարտքն իրենց բարերարին Հայաստանի զավակները, որոնց որդեգրել է Ռուսաստանը, եւ որոնք դաստիարակվել են նրա հայրական խնամքի ներքո, հարստացել ռուսական լուսավորության եւ գիտության պտուղներով»⁹:

мне особенно, и этой привязанностью и своими бесконечными рассказами, — он немало наглядился, бродя по свету, и был довольно начитан, владея тремя языками, — вызвал и во мне горячую любовь к себе», И. Бунин, Собрание сочинений в четырех томах, т. 1, изд. «Правда», Москва, 1988, էջ 6:

⁸ Հմմտ. «Северное сияние»:

⁹ Հմմտ. «Дети Армении, усыновленные Россией, воспитанные под отеческим попечением ее, обогащенные плодами русского просвещения и науки, — дети Армении, понимая всю святость своих отношений к России, чем и каким путем могут сколько-нибудь воздать долг признательности к Благо-

Նազարյանցը հոգեբանորեն անհրաժեշտ է համարում այս գիտակցումը, երախտագիտությունը հայալեզու ամսագրի միջոցով հաղորդել իր հայրենակիցներին:

Լազարյան ինստիտուտի վերաբերյալ ստեղծված է մեծածավալ գրականություն ունենենով ու հայերենով: Հատկապես մեծաքանակ են ունենենով ստեղծվածները: Թվարկենք դրանցից մի քանիսը՝

1. Исторический очерк Лазаревского Института восточных языков, Москва, 1863,

2. Семидесятилетие Лазаревского Института восточных языков (1815—1890), Москва, 1891,

3. Тридцатилетие специальных классов Лазаревского Института восточных языков, Москва, 1903,

4. Материалы для истории Лазаревского Института Восточных Языков, Исторический обзор, Москва, 1914,

5. А. П. Базиянц, Лазаревский Институт в истории отечественного востоковедения, Москва, 1973,

6. Главы из истории Московского востоковедения, Лазаревский институт, Московский институт востоковедения, МГИМО, Москва, 2015,

7. Պատմություն Լազարեան տոհմի եւ Լազարեան ճեմարանի Արեւելեան լեզուաց, գրեց Յովսէփ Թադեւոսեան, շրջանավարտ Լազարեան ճեմարանի, Վիեննա, 1953,

8. Ա. Հ. Իգնատյան, Լազարյան ճեմարան, Երեւան, 1969,

9. Լազարյան ճեմարան 200, Երեւան, 2017:

Վիեննայում 1953 թվականին տպագրված եւ Լազարյան ճեմարանին նվիրված ծավալուն մենագրության մեջ նախկին շրջանավարտ Հովսէփ Թադեւոսյանը ջերմ հուշեր ու եզակի փաստեր է հաղորդում այդ առաջնակարգ ուսումնական հաստատության մասին: Նա հատկապես շեշտում է, թե ինչ կարեւոր գրքեր են տպագրվել Լազարյան ճեմարանի տպարանում ու ավելացնում. «Այդ օրերին Մոսկովյան շուկայի նման մի հարուստ եւ բոլոր չարմարութիւններով օժտուած տպարան»¹⁰:

творительнице?, «Главы из истории Московского востоковедения», Лазаревский институт, Московский институт востоковедения, МГИМО, Москва, 2015, էջ 117:

¹⁰ Պատմություն Լազարյան տոհմի եւ Լազարեան ճեմարանի Արեւելեան լեզուաց, գրեց Յովսէփ Թադեւոսեան, շրջանավարտ Լազարեան ճեմարանի, Միսիթարեան տպարան, Վիեննա, 1953, էջ 322:

Տպագրված կարեւոր գրքերի թվում նա նշում է Ստեփանոս Նազարյանցի 1851 թվականին հրատարակված «Յաղագս փորձական հոգեբանութեան ճառ» աշխատութիւնը¹¹:

Լազարյան ճեմարանի շրջանավարտ, հայ դասական բանաստեղծ Վահան Տերյանը «Յուշեր Լազարեան ճեմարանի մասին»¹² բանաստեղծության մեջ քաղցր վերհուշով ներկայացնում է այն հոգեբանական ջերմութիւնը, որն իրեն պարգեւել է Լազարյան հաստատութիւնը.

Когда безотрадные думы гнетут
И грусть поселяется в сердце моем,
Родной вспоминается мне институт,
Как блудному сыну отеческий дом
Та светлая жизнь раскрывается вновь,
Когда бушевал в наших думах пожар,
Когда пламенела и пенилась кровь,
Огонь иссекал каждый сердца удар
И каждая дума мечтою была,
И каждый порыв добела был нагрет,
И даль нас из темного мрака звала
К тому, чему нету названия, нет¹³...

Լազարյան ճեմարանի հոշակը տարածվել էր աշխարհի տարբեր երկրներում ապրող հայերի շրջանում: Լուրը հասնում է Հնդկաստանի Կալկաթա քաղաքի հայկական ճեմարան, որտեղ սովորում էր խիստ ուսումնատենչ մի տղա՝ Մկրտիչ էմինը, որը հետագայում բանասեր, հայագետ, թարգմանիչ, արեւելագետ եւ հայտնի դարձավ ոչ միայն Լազարյան ճեմարանում, Ռուսաստանում, այլեւ Եւրոպայի հայագիտական շրջաններում:

1829 թվականի գարնանը՝ հազիվ 14 տարեկան էմինը, որը բոլորովին չգիտեր ռուսաց լեզուն, նստում է մի առեւտրական նավ եւ յոթ ամիս ճամփորդելուց հետո Ստոկհոլմից անցնում է Ֆինլանդիա եւ հասնում Մոսկվա, ընդունվում Լազարյան ճեմարան: Համառ աշխատասիրության շնորհիվ կարճ ժամանակում յուրացնում է ռուսերենը: Ճեմարանը կոչվում էր արեւելյան լեզուների, սակայն սովորեցնում էին նաեւ ուրիշ առարկաներ, ուստի էմինը, բացի ռուսերենից, սովորում է ֆրանսերեն, գերմաներեն,

¹¹ Անդ, էջ 316:

¹² Հմմտ. «Воспоминания о Лазаревском институте»:

¹³ Տե՛ս Ա. Ս. Բազիյանց, Лазаревский Институт в истории отечественного востоковедения, изд. «Наука», Москва, 1973, էջ 3:

լատիներեն, թվաբանություն, երկրաչափություն, եռանկյունաչափություն, հանրահաշիվ, պատմություն, աշխարհագրություն, նկարչություն, բնագիտություն, գծագրություն, աստվածաբանություն, տրամաբանություն եւ հայոց լեզու:

1834-ին ավարտում է Լազարյան ճեմարանը եւ ընդունվում Մոսկվայի կայսերական համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի բանասիրական բաժինը, որն ավարտում է 1838-ին: Էմինի ուսումնառության տարիները համընկան Մոսկվայի համալսարանի ամենածաղկուն շրջանին, եւ նա ծանոթացավ շատ նշանավոր մտավորականների:

1838 թվականից Էմինն սկսում է դասավանդել Լազարյան ճեմարանում: 1840–1860 թվականներին եղել է Լազարյան ինստիտուտի տեսուչը, իսկ այնուհետեւ ուսուցչապետը՝ մինչեւ 1882 թվականը:

Իբրեւ մեծ մանկավարժ՝ Էմինը նորանոր եղանակներ էր կիրառում, գիտահոգեբանական առումով այնպես կազմակերպելով դասերը, որ աշակերտները դրանց ընթացքում չձանձրանան եւ միանգամից ու դյուրին կերպով յուրացնեն մատուցվող նյութը: Այդ մասին իր հուշերում պատմում է հայ դասական գրող Ռաֆայել Պատկանյանը: Էմինը դասարան էր մտնում հինգ բուրձ անոթի եւ դուրս էր գալիս հինգ բուրձ ուշ, սակայն իրենք բոլորովին չէին ձանձրանում դասերի երկարատեւությունից եւ ոչ էլ հոգնում էին նրա պատմածները լսելուց: Էմինն ուներ հոգեբանական մի գաղտնիք, որը միայն իրեն էր հայտնի, նա դրանով շատ հետաքրքիր էր դարձնում դասը: Մանկավարժության մեջ ընդունված է, որ դասը բաժանվում է երկու հավասար կեսի. առաջին կեսը հին դասի հարցում, երկրորդը՝ նոր դասի մատուցում: Էմինի դասն այդպես չէին անցնում: Նա աշակերտների հարցմանը տրամադրում էր հազիվ $\frac{1}{4}$ ժամը, իսկ մնացած մասն ինքն էր բացատրում հազար ու մի օրինակներով, նուրբ մանրամասներով, մեկնություններով: Այդ պատմություններն աշակերտները միանգամից «կուլ էին տալիս»: Դրանք շարժում էին սովորողի երեւակայությունը եւ օրերով ու շաբաթներով զրուցի ու վիճաբանության առարկա դառնում: Էմինը շատ էր սիրում Կոխլովի առակները եւ դրանք ներկայացնում էր իր ընտիր թարգմանությամբ: Պատահական չէ, որ Մոսկվայի համալսարանում սովորելու տարիներին, Ա. Պուշկինի կենդանության օրոք (1834–1835-ին), Էմինը հայերեն թարգմանեց անմահ գրողի «Բախչիսարայի շատրվանը» եւ «Կովկասի գերին» գործերը¹⁴:

¹⁴ «Լազարյան ճեմարան», «Արմավ» հրատ., Երևան, 2017, էջ 8:

Պատկանյանն իր հուշերում հատուկ շեշտում է, թե էմինին խորթ է եղել ազգային սնապարծությունը:

Մեծ գիտնականը՝ Լազարյան ճեմարանի անմնացորդ նվիրյալը, թողել է գիտական հարուստ ժառանգություն: Նա նորից ուսուներեն է թարգմանել պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», ուսուընթերցողին է ներկայացրել հայ եկեղեցու բոլոր շարականները՝ համապատասխան առաջաբանով ու ծանոթագրություններով, ուսուներեն խիստ ուշագրավ աշխատություն է գրել ուսական սրբախոսական գրականության վերաբերյալ: Առաջինը հայ իրականության մեջ ուսումնասիրել է հայ հեթանոսական կրոնը¹⁵:

Ֆրանսիացի նշանավոր հայագետ Վիկտոր Լանգլուայի խնդրանքով ֆրանսերեն է թարգմանել Ե. դարի հայ մատենագիրներ սուրբ Կորյուն վարդապետի «Վարք Մաշտոցի» եւ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» աշխատությունները, որոնք լույս են տեսել 1869-ին Փարիզում՝ «Հայ պատմիչների ժողովածու»-ի երկրորդ հատորում¹⁶:

Էմինը գրել է գրականագիտական դասագիրք, հրատարակել գրականության քրեստոմատիա, որում իր թարգմանությանը զետեղված են համաշխարհային եւ ուս գրականության ընտիր նմուշներ, գրել է բառարաններ եւ այլ աշխատություններ:

Կառավարական մակարդակով Լազարյան ճեմարանում նշվել են էմինի ծննդյան 70 եւ մանկավարժական գործունեության 50-ամյա հոբելյանները: Հոբելյանի նյութերը, Գրիգոր Խալաթյանցի խմբագրությամբ, լույս տեսան Մոսկվայում՝ 1887-ին¹⁷:

Հոբելյանին ուղարկված բազմաթիվ շնորհավորանքները պերճախոս վկայում են, թե որքան մեծաքանակ համակիրներ եւ ինչ հեղինակություն ուներ Մոսկվայի Լազարյան ճեմարանն աշխարհում: Հոբելյանին շնորհավորական ուղերձներ են ստացվել եւրոպական եւ ուսական հայագիտական կենտրոններից՝ Պիզայի համալսարանից, Մոսկվայի հնագիտական միությունից, Վիսբադենից, Փարիզի հայ ուսանողներից, Պետերբուր-

¹⁵ Сէս Н. Эмин, Очерк религии и верований языческих армян, исследование, изд. Лаз. ин.-та, Москва, 1864:

¹⁶ Сէս V. LANGLOIS, Collections des historiens anciens et modernes de l'Arménie, t. I, Paris, 1867, t. II, Paris, 1869:

¹⁷ Сէս Празднование пятидесятилетнего юбилея учено-педагогической деятельности Н. О. Эмина, под редакцией Г. А. Халатянца, Москва, 1887:

գի համալսարանից, պրոֆեսոր Լուի Լեթերի (Փարիզ), Ստրասբուրգի՝ ակադեմիկոս հայագետ Հ. Հյուբշմանից, Վիեննայի, Լուվենի, Ստրասբուրգի համալսարաններից, Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարյաններից, բոլոր հայկական գաղթավայրերի կրթական հաստատություններից ու հոգեւոր առաջնորդներից, Ամենայն Հայոց կաթողիկոս Մակարից, հայ պարբերականներից, հոշակավոր դերասան Պետրոս Աղամյանից եւ շատ-շատ ուրիշներից¹⁸:

Մկրտիչ էմինի մեծագույն ծառայություններից է նաեւ ուշ միջնադարի նշանավոր հայ բանաստեղծ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի շքեղ հրատարակության կազմակերպումը եւ գրքի հեղինակ Գեորգ Ախվերդյանին ցուցաբերած մասնագիտական մեծ աջակցությունը: Գիրքը լույս է տեսել Մոսկվայում 1852-ին¹⁹:

Լազարյան հաստատությանն ու Մկրտիչ էմինին արժանին մատուցելով՝ առանձին մամուլ էր հատկացրել Վալերի Բյուսովին իր «Հայ բանաստեղծություն»²⁰ հրաշք ժողովածուում, որը լույս տեսավ Մոսկվայում 1916-ին ու դարձավ հոգեբանական բացառիկ աջակցություն 1915 թվականին հայրենագրված ու մեկ ու կես միլիոն նահատակներ ունեցող հայ ժողովրդի համար²¹:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ռուսաստան, Հայաստան, քրիստոնյա, հոգեբանական կապ, Խ. Աբովյան, Ստ. Նազարյանց, Լազարյաններ, բարեկամություն:

РЕЗЮМЕ

Статья посвящена Лазаревской семинарии (позднее — Лазаревскому институту) как блестящему примеру армяно-русского культурного диалога и духовной общности. Авторы показывают, что исторические связи между армя-

¹⁸ Անդ:

¹⁹ «Գրական ժառանգություն», 3, Գ. Ախվերդյան, Նամակներ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1964, էջ 138-316:

²⁰ Հմմտ. «Поэзия Армении»:

²¹ ՏԽ «Поэзия Армении с древнейших времен до наших дней», под редакцией, со вступительным очерком и примечаниями Валерия Брюсова, изд. «Советакан грох», Ереван, 1987, էջ 43, 494, 495, 511:

нами и русскими укрепились после освобождения Восточной Армении в ходе русско-персидской войны 1826–1828 гг., что нашло отражение в творчестве Хачатура Абовяна и других мыслителей, подчеркивавших духовную близость двух христианских народов.

Основанная в 1815 г. в Москве на средства семьи Лазаревых, семинария быстро превратилась в выдающееся учебное заведение — центр востоковедения, высоких гуманитарных знаний и культурного обмена. Богатая библиотека, уникальная типография и передовые учебные программы привлекали многих выдающихся деятелей русской культуры: Пушкина, Гоголя, Грибоедова, Жуковского и других. Среди учащихся были Тургенев, Салтыков-Щедрин, Станиславский, Рубен Симонов и многие другие.

Особое внимание уделено роли армянских ученых и педагогов — Степано-са Назарьянца и Мкртича (Михаила) Эмина. Их научная и просветительская деятельность, обширные труды по востоковедению, переводы и умение развивать творческое мышление студентов рассматриваются как ключевые элементы армяно-русского интеллектуального взаимодействия. Статья также описывает значительные издания Лазаревской типографии, среди которых — ранние труды по армянской литературе и языку.

Лазаревский институт оказал огромное влияние на развитие отечественного востоковедения, став основой для создания Московского института востоковедения и дальнейшего МГИМО. Приведенные исторические факты показывают, что институт стал ярким символом вековой дружбы, культурного обмена и взаимного уважения между армянским и русским народами.

SUMMARY

The article examines the Lazarian Seminary (later Lazarian Institute) as an outstanding symbol of Armenian–Russian cultural dialogue, tracing its historical, intellectual, and psychological significance. Drawing on extensive historical data, the authors show that Armenian–Russian relations, rooted in shared Christian values and cultural affinity, were further strengthened after Eastern Armenia’s incorporation into the Russian Empire following the 1826–1828 Russo-Persian War. This historical backdrop inspired Khachatur Abovyan and many intellectuals who emphasized the spiritual kinship between the two nations.

Founded in 1815 in Moscow through the patronage of the wealthy and influential Lazarian family, the Lazarian School evolved into a prestigious institute of Oriental Studies and became a cradle of Armenian–Russian scholarly cooperation. The institute’s rich library, multilingual printing house, and progressive curriculum attracted major Russian cultural figures, including Pushkin, Gogol, Griboyedov, and Zhukovsky. Many prominent Russian writers and artists—such as Ivan Turgenev, Mikhail Saltykov-Shchedrin, Konstantin Stanislavsky, and Ruben Simonov—received their early education there.

The article emphasizes the central role of Armenian scholars and teachers, particularly Stepanos Nazaryants and Mikael (Mkrtich) Emin. Emin’s decades-long pedagogical and scholarly activity, his translations, academic studies, and his ability to cultivate students’ imagination are described as exemplary contributions to Armenian–Russian intellectual synergy. The piece also highlights significant publications produced by the Lazarian printing house, including early Armenian literary and linguistic works.

The influence of the Lazarian Institute extended far beyond the Armenian community, contributing to the development of Russian Oriental Studies and eventually serving as the institutional foundation for the Moscow Institute of Oriental Studies and modern MGIMO. Through numerous historical examples, the article shows that the Lazarian Institute embodied a unique and lasting model of cultural friendship, mutual respect, and scholarly collaboration between Armenians and Russians.

